

Միասնական հաշվետվողական ստանդարտ

Ինչ է և ինչու է ներդրվել Հայաստանում



Ինչ է ստանդարտը և երբ է ներդրվել Հայաստանում

Հայաստանը 2023 թվականից միացել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից մշակված տեղեկությունների ավտոմատ փոխանակման համակարգին՝ ներդնելով Միասնական հաշվետվողական ստանդարտը: Արդյունքում՝ Հայաստանը շուրջ 120 պետությունների և աշխարհագրական տարածքների հետ, տարեկան մեկ անգամ, փոխադարձության սկզբունքով իրականացնելու է ոչ ռեզիդենտների ֆինանսական հաշիվների վերաբերյալ ավտոմատ փոխանակում:

Փոխանակում տեղի չի ունենա այն պետությունների հետ, որոնց հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ, դրանք են՝ Ադրբեջանը, Թուրքիան և Պակիստանը:

Ում է վերաբերում տեղեկությունների փոխանակումը

Տեղեկությունների ավտոմատ փոխանակումը վերաբերում է բոլոր այն ՈԶ ռեզիդենտ հարկ վճարողներին (ֆիզիկական անձ, կազմակերպություն), ովքեր ունեն ֆինանսական հաշիվ ՀՀ առևտրային բանկերում և ներդրումային ընկերություններում:

Հաշվետու ֆինանսական հաստատությունը պետք է ֆինանսական հաշիվ բացող կամ հաշիվ ունեցող անձին տեղեկացնի կամ հանրային կերպով հասանելի դարձնի ստանդարտի շրջանակում փոխանակվող տեղեկությունը հարկային մարմնին տրամադրելու վերաբերյալ պահանջը:

Ինչպես է իրականացվելու տեղեկությունների փոխանակումը

Հայաստանի ֆինանսական հաստատություններում ՈԶ ռեգիդենտ հարկ վճարողների ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները Հայաստանն ավտոմատ կերպով փոխանակելու է հաշվետերերի հարկային ռեգիդենտության երկրներում գործող հարկային մարմինների հետ:

Փոխադարձության սկզբունքով ՀՀ պետական եկամուտների կոմիտեին կտրամադրվեն գործընկեր պետությունների ֆինանսական հաստատություններում բացված Հայաստանի հարկային ռեգիդենտների ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները: Տեղեկությունները հասանելի են միայն հարկային մարմիններին և որևէ այլ պետական մարմին չի ունենա հասանելիություն:

Որ տեղեկություններն են ենթակա փոխանակման

Հաշվետու ֆինանսական հաստատությունները հարկային մարմին են ներկայացնելու ՈԶ ռեզիդենտների նոր բացվող և գործող ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկատվություն: Հայաստանի դեպքում նոր ֆինանսական հաշիվները հաշվետու ֆինանսական հաստատությունում 2024 թվականի հունվարի 1-ից հետո բացված հաշիվներն են՝ անկախ ֆինանսական հաշվի արժեքից: Գործող հաշիվներ են՝ հաշվետու ֆինանսական հաստատությունում մինչև 2023-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բացված ֆինանսական հաշիվները: Ֆիզիկական անձանց դեպքում հաշվի մնացորդի շեմ սահմանված չէ, իսկ գործող իրավաբանական անձինք հաշվետու են, եթե ֆինանսական հաշիվների մնացորդների հանրագումարը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է 250 000 ԱՄՆ դոլարը կամ դրա համարժեքը ՀՀ դրամով կամ այլ արտարժույթով:

Ինչ նպատակ ունի ստանդարտի ներդրումը

Տեղեկությունների փոխանակումն
իրականացվում է բացառապես հարկման
նպատակով, հետևաբար փոխանակման
ենթակա չեն ՀՀ քաղաքացիների տվյալները:
Տեղեկությունների ավտոմատ փոխանակման
համակարգը հնարավորություն կտա՝

- առավել ճշգրիտ հաշվարկելու Հայաստանի
ռեզիդենտների հարկային
պարտավորությունները,
- բարձրացնելու հարկային
կարգապահությունն ու թափանցիկությունը,
- նվազեցնելու օֆշորային հաշիվները,
- ապահովելու հարկային եկամուտների աճ: